

ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱԴՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԴԻՆԳ ՆՇԽԱՐՆԵՐԸ

ԱՆԱԴԻՏ ԱԹԱՅԱՆ

Բ.գ.թ., դոցենտ

ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ

Դարերի պատմություն ունի Արցախի ժողովրդական բանահյուսությունը, որը հետաքրքրել է մեր բանարվեստի շատ ներկայացուցիչների:

Մեր մշակույթի անդաստանում մնայուն արմատներ ձգեց արցախցի մտավորական, բանասեր, բանահավաք, մանկավարժ, ազգագրագետ Լ. Հարությունյանը՝ ընթերցողների սեղանին դնելով «Նշխարներ Արցախի բանահյուսության» 5 ժողովածուն՝ ազգագրական, բանահյուսական նյութերի անսպառ մի գանձարան, որն / հերթին արժևորվում է որպես հարազատ ժողովրդի կյանքը, նիստուկացն ու հինավուրց բառ ու բանն ամփոփող ստեղծագործություն: Մի պատկառելի ժառանգության ընդհանրացում է 5 գիրքը՝ գիտական հետաքրքիր դիտարկումներով ու հետազոտությամբ: 5 ժողովածուներն էլ տեսական ու գործնական ընդհանրացումներով ներկայացնում են արցախյան ժողովրդի լինելության գաղտնիքը: Լ. Հարությունյանի «Նշխարները» համալրված են կարևոր բանագիտական նյութերով, որոշակի խորքային, կառուցվածքային առանձնահատկություններով բացահայտում են հայոց կյանքի ու մտքի պատմական տարբեր ժամանակահատվածների կարևորագույն դրվագները, ժողովրդի բարքերն ու սովորույթները:

Լ. Հարությունյանի բանահավաքչական-ազգագրական գործունեությունը նախ և առաջ կարևորվում է ազգի ինքնաճանաչման զգացման ձևավորման ու զարգացման, ազգային պատմության, ժողովրդի կյանքի հետազոտման, գրական լեզվի զարգացման, ժողովրդախոսակցական լեզվի ուսումնասիրության առումներով: Կատարված աշխատանքը նաև պատկերացում է տալիս հեղինակի ինքնության, բանասիրական հակումների, ազգագրության գիտակի, գրականագետի, պատմության ու արդիականության խաչներուկներում ճիշտ ու հաստատուն դիրքորոշում ունեցող բանագետի մասին:

Բոլոր գրքերում էլ տեղ են գտել Արցախ աշխարհում ապրող բնիկ ժողովրդի դարավոր ավանդույթների, հեքիաթների, զրույցների նմուշներ, առած-ասացվածքներ, ժողովրդական բազում մանրապատում, ազգագրական նյութեր, երգեր ու ժողովրդական խաղիկներ, զվարճախոսություններ: Գրքերից դուրս չեն մնացել հինավուրց երկրամասի կյանքի, կենցաղի, սովորույթների ոչ մի մանրամասն, նրանցում ամփոփված են բանահյուսական ու պատմագիտական այնքան նյութեր՝ ճշգրիտ ու գիտական, որոնք ժողովածուներին ստույգ հանրագիտա-

* Հոդվածն ընդունվել է 03.03.2013:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնը:

րանային բնույթ են հաղորդում: Ղարաբաղցու և ղարաբաղյան հավատն է «Նշխարների» անփոփոխ ուղեկիցը:

Իր բոլոր ժողովածուներում Լ. Չարությունյանը յուրօրինակ բացատրություններ ու ծանոթագրություններ է վկայակոչում ժողովրդական բանասացների, գուսանների տարիքի, սոցիալ-կենցաղային միջավայրի, բնածին ընդունակությունների, կատարողական վարպետության վերաբերյալ: Դա հնարավորություն է տալիս խորքային պատկերացում կազմել բանահյուսական այս կամ այն ստեղծագործության բնույթի, ժանրային առանձնահատկությունների մասին: Բազում առիթներով Լ. Չարությունյանի գրած հոդվածները, դիտողություններն ու դատողությունները վկան են նրա՝ բանահյուսության, ազգագրության զարգացման մեջ խաղացած անթաքույց դերի: Չեղինակի ուսումնասիրություններն անմիջական առնչություն ունեն հայ ժողովրդի ինքնաճանաչման, նրա զարգացման տարբեր փուլերի, պատմական ուղու կարևոր խնդիրների հետ: Լ. Չարությունյանի 5 ժողովածուները երկարատև տքնության արդյունք են ու յուրօրինակ գիտահետազոտական աշխատանքներ: Չեղինակը բանահյուսության խորախորհուրդ աշխարհն է մտնում ոչ ամենևին մեծադիրորդ հավաստիացումներով, այլ իբրև մի համեստ, բայց խոհուն ու պայծառամիտ մշակ, ում համար թանկ են ազգն ու ազգային ոգին, ազգային մտածողությունը: Մեծագույն պատասխանատվությամբ է նա հետազոտում հայոց բանագիտությունը, հայկական բնաշխարհն ու հավատալիքները, ժողովրդի ներքին կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները, ժողովրդի մղած վաղեմի և այսօրվա պայքարը:

Չարությունյանի ժողովածուներից «բուրում է» հեղինակի սերը դեպի ժողովուրդը, նրա անսահման նվիրվածությունը հարուստ ու հին մշակույթի ուսումնասիրության գործին: Այն հաստատ համոզմունքով, որ բանահյուսության և բանագիտության իսկական, ճշմարիտ գիտությունը թերի է առանց հայ ժողովրդի արցախյան հատվածի բանավոր ստեղծագործության, Լ. Չարությունյանը պեղեց, ուսումնասիրեց, հրապարակ հանեց ժողովրդի 1000-ամյա գանձերը և աննախընթաց աստիճանի բարձրացրեց հայ բանագիտությունը: Արցախի ժողովրդական բանահյուսության փրկության գործում մեծ ներդրում ունեն մեր ազգային նվիրյալները՝ Բահաթյան եղբայրները, Երվանդ Լալայանը, Մակար Բարխուդարյանը, Խաչիկ Դադյանը, ավելի ուշ՝ բանահավաքչական գործունեություն են ծավալել Կոնստանտին Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), 20-ական թվականներին՝ Սարգիս Իսրայելյանը, Մարգարիտ Գրիգորյանը: Շատ ժանրեր մոռացումից փրկվեցին նշանավոր մանկավարժների, մտավորականների ջանքերով:

Գնալով աճեց հետաքրքրությունը Արցախի բանահյուսության վերաբերյալ, հրատարակվեցին առանձին գրքեր, որոնցից են նաև Լ. Չարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» 5 հատորները:

«Բանահյուսությունը ժողովրդի համառոտ կենսագրությունն է (որից ընդարձակը թերևս չկա) ու նաև պատմական հիշողությունը՝ դարձած լեզունդ, ավանդություն, սովորություն կամ ասացվածք», - գրում է Լ. Չարությունյանը: [1]

Առաջնորդվելով ժողովրդական՝ «ժողովրդի չափ թանկ է իմ սրտին» սկզբունքով՝ Լ. Չարությունյանն իր ժողովածուներից մեկի առաջաբանում վկայում է, որ

իր գրքերը չեն սահմանափակվում բանահյուսական-ազգագրական նշանակությամբ, այլ դրանք բացահայտում են արցախցիների քաղաքական, տնտեսական, սոցիալական վիճակը՝ անհիշելի ժամանակներից առ այսօր, նրա խոհերը, զգացումները, ազգային միասնության երազանքը և ազատ ապրելու ձգտումները: «Նշխարների» I գրքի ներածականում Լ. Հարությունյանը մեծ պատասխանատվությամբ ու բանասերի լրջությամբ է բնութագրում իր վաստակը, որի հիմքը Արցախ աշխարհի, հավատալիքների, ժողովրդի կյանքի ու կենցաղի, արցախցու մարդկային առիքնող հատկանիշների, հյուրամեծարության, անկաշառ մարդասիրության, հոգեկան բարձր նկարագրության վերհանումն է:

«Առհասարակ, մեր սովորությունները բախտավոր ժամանակների ծնունդ են, դարերի մեջ ամրակայված ու սրբացված, երկրային սիրով ջրղեղված, իրենց ակունքներով մաքուր ու ժողովրդական, բոլորի կողմից ընդունված ու սիրելի», - գրում է հեղինակը: [2]

Լ. Հարությունյանը, հիրավի, մոռացումից փրկել է այն արժեքները, որոնք վերաբերում են մեր ազգային նկարագրին, մեր պատմությանը: I և II գրքերում Լ. Հարությունյանը հետաքրքիր դիտարկումներով կարևորում է Արցախի բանահյուսության թեմատիկ բազմազանությունը, ընդգծում նրա ինքնուրույնությունը, որը բխում է դարերի ոլորապտույտներում Արցախի ժողովրդի հայեցողությունը չկորցնելու մաքառումներից:

«Արցախի բանահյուսության թեմատիկ որոշ առանձնահատկություններն ըստ իմ ժողոված նյութերի» վերնագրի տակ Լ. Հարությունյանը բացահայտում է բանահյուսական նշխարների պատմական հենքը՝ շեշտելով, որ «Արցախի ժողովրդական բանահյուսությունը եզակիորեն հարուստ է և եզակիորեն ընդգրկուն, քանզի այն ոչ թե պատմական Հայաստանի էթնիկական մի շրջանն է ներկայացնում, այլ Հայոց Արևելից կողմանց Աղվանից ողջ հայ աշխարհի դարերով ստեղծված մտավոր արժեքի որոշակի խորացումը»: [3]

Լ. Հարությունյանի ժողովածուները վկայում են Արցախի ժողովրդական բանահյուսության թեմատիկ բազմազանությունը, նրա առնչությունը միջազգային ֆոլկլորին, միաժամանակ ընդգծում են նրա հատկանշական կողմը՝ ինքնուրույն ու տեղականը, դրանով էլ հենց այն անկրկնելիությունը, որ տեսնում ենք էջ առ էջ հավաքված բանահյուսական-ազգագրական նյութերում:

Լ. Հարությունյանի ժողովածուներում բանահյուսական նյութերի ատաղձը հողին, երկրին հավատարիմ լինելու գաղափարն է: Բազմաթիվ են այն նյութերը, որտեղ տեսնում ենք աշխատանքի, բարու, վեհի ու վսեմի պաշտամունք, հայրենի հողի, ջրի, պապենական օջախի հանդեպ սեր ու հավատարմություն:

Ավանդություններից մեկում ասվում է. «Վրդեն հիշքան շատ չըրչարիս, էնքան վեղը քիժորանում ա, վեղեն քաղցրն էլ տամ ա պըրանետ: Ըստի ասիմ, տու էլ աշկո ծակ չի պահիս... Ծառ շատ տնկե, համա շիլ չըղնիս Քրիստոսս տունկը պուքտասս, քամուն պերած սերմը տնգիս: Վրդունդ թըմահեն ծառը տնգիս վուչ, չաշմիշ կընիս, հացըդ պատան չի կենալ, սորփը մատաղը ընթունել չի, կաթնըդ կշաղե... Հաթիդ վրդունդ խոր վեր թողե, վեր տական-կլխան փչող քամեն կարեվուչ թա Դյամա դիք տակռեն պուք տա»: Սա հողին կապված լինելու, ազգային արմատներին կառչելու գաղափար է, որը հավաստում է, որ բանահյուսությունը

կոչված է ազգապահպանման կարևոր գործընթացի իրականացմանը:

Հայ ժողովրդի Արցախի հատվածի պատմությունը լի է օտար նվաճողների ասպատակությունների օրինակներով: Այս երևույթն իր արտացոլումն է գտել ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր հիմնական ժանրերում: Ծիշտ է նկատում հեղինակը. «Ժողովրդական բանահյուսությունը անխաթար կերպով պահպանում է այն ամեն լավը, որ որպես հիմնաքար պետք է ծառայի ազգային ներկա և ապագա տան կառույցը պատահական ակնկալիք ու անակնկալ հողմերից անվթար պահելու համար: Խելոք ու ողջամիտ են մեզ ավանդված հեքիաթները, գրույցները, ավանդությունները, առածները, ասացվածքները, դարձվածքները... Նրանք նաև լեռնային աղբրաջրի պես մաքուր են, թափանցիկ ու պարզ, բազմաբնույթ ու բազմախոխոջ, ուր արտացոլված են պատմականորեն արված մեր հաստատուն ու անշեջ քայլերը, նաև վրիպումները, սայթաքումները, խտտորումները, բացթողումները: Ժողովրդական բանահյուսությունը ստեղծվում է դարերի ընթացքում և ընթանում ժողովրդի հետ համաքայլ՝ շարունակ կրկնելով, շարունակ հիշեցնելով, նպատակ ունենալով մաքուր ու անպարտ պահելու նրա ոգին, լավը, շիտակը կրկնելու, սխալը, անիրավն ու վնասակարը հեռու վանելու համապագ առաքինությամբ» [4]:

II, III, IV գրքերում կան նյութեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի պատմությանը, նրա անցած ճակատագրին:

Մի շարք նյութերում Լ. Հարությունյանը քաղաքականապես հասուն մտավախությամբ է բնութագրում օտար նվաճողի վարքագիծը: Այլաբանական գրույցներում հեղինակը բացահայտում է դարավոր թշնամու վարքագիծը:

Ժողովածուներում կան բնորոշ ասույթներ, ասացվածքներ: Այսպես. «Սրտիդ նստեն, մրոքդ քանդիմ», կամ «Վըննանս տեղ անիմ, տեղդ նեղ անիմ», կամ «Թուրքեն վեր տոն տարեր՝ հարթնանն աշկեն կյեշի, տանը գյբին, կյունեն ծիին» և այլն:

Լ. Հարությունյանը թվարկում է պատմության դասերը, ցավում, որ բացակայում է ազգային հավաքական մտածողությունը:

Լ. Հարությունյանի «Նշխարների» արժեքը նրա ինքնուրույն մշակման, ճշմարտացի հիմքի ու դրանք մահվան վտանգից ազատ ու անխաթար պահելու մեջ է: Ժողովածուներում ապահովված է ներքին պայմանականությունը, որը վկայում է բանահավաքի մտահորիզոնի, ժամանակների ճիշտ ընկալման, բարքերի, սովորույթների իմացության մասին:

Հատկապես 4-րդ և 5-րդ գրքերում զգալի է բանահյուսության և գրականության փոխադարձ կապն ու ներգործությունը: Յուրօրինակ նպատակայնությամբ բանահյուսական տարրը հաճախ զուգակցվում է բանաստեղծական կամ էլ պոռոգայիկ որևէ պատումի հետ: Հաճախ ժողովրդական դարձվածքները, առած-ասացվածքները արժևորվում են որևէ բանաստեղծական կտորով: Հետաքրքիր է «Հետևենք քաղաքագետ ու արդարամիտ ժողովրդի խրատաբանքին» բաժինը, որտեղ երևում է հայի բարությունը, սերության գովքը, հայրենասիրությունը, ժողովրդասիրությունը, նաև՝ պարզամտությունը:

Այսպես. Թշնամիդ վեր վեննը առաջ ա տնում, տու էրկու հետ առաջ տիր, թաչէ՝ են մի վեննը կլխեդ ա տնական:

Կամ. Վեր ուրուշու լվոթուն ըս անում, թամահը մննադ քցի, օրհնանքը քեզ բուլա:

Կամ. Թամահը պեռն ա ըշխարհքես սրտեն յրա: Աստված մեր թմահան կտրե՝ սերության յրա տնի:

Մեծ է հասկապես 4-րդ գրքի «Ինչ դեղատոմսեր է առաջարկում ժողովրդական բանահյուսությունը ազգային ցավերը դարմանելու համար» բաժնի դաստիարակչական արժեքը: Հեղինակի նպատակն է «հայաշխարհիկ ավանդույթներով դաստիարակել հայ երեխային. մոր կաթը դարձնել հայրենասիրական բալասան, իսկ բանահյուսությունը պետք է «մեր հավատի զանգի պես ծլնգա մեր սերունդների ականջների մեջ: Հայրենասիրություն: Ահա այն կրակը, որ ի զորու է մշտաբորբոք պահել գոյատևման քուրան պապենական հողի վրա, ո՛չ մի այլ տեղ: Այնտեղ, ուր մեր հարազատների գերեզմաններն են, շեն աղբյուրները, անկրկնելի պտղաշխարհը, խաղողը, գինին, վաղնջական ավանդույթներով հարուստ բնությունը և մեր իմաստուն հավաքականությունը»: [5]

Բազմաթիվ բանահյուսական գրույցներով հեղինակը բացահայտում է «Հայր պետք է գոյատևի զենքով, արարելով, գրով ու լեզվով, ամենագոր գիտությամբ, ամենախոս արվեստով, իր աստվածային սովորություններով, սիրով ու միաբանությամբ և իրեն ներհատուկ բարեմասնությամբ ու նվիրվածությամբ բոլոր ժողովուրդների հետ: Անցնելիք բովանդակ ճանապարհին չմոռանալով, որ մեղր արաբողը նաև խայթել պետք է իմանա, թեկուզ իր կյանքը կորցնելու գնով»: [6]

Յուրաքանչյուր փոքրիկ գրույցի մեջ խոսում է իմաստուն այրը, որը կենսափորձի հարստությամբ, բազմախորհուրդ կեցվածքով մեզ է պարզում Արցախի բանահյուսության մեզ ավանդած խորհուրդներն ու պատգամները: Այդ են վկայում «Հայի 5 մատները», «Երկու ուղևոր», «Հային ետե խելքը» և այլ գրույցները:

Ըստ բանահավաքի՝ հայ ազգը խորհող է, չափ ու կշռող, ստեղծարար և արևահույս: Նա միշտ էլ պատմական ամենաանբարենպաստ ու բարդ իրավիճակներից կարողացել է դուրս գալ իր բնատուր խելքի, հնարամտության, ինքնուրույն գործելակերպի շնորհիվ՝ աչքի ընկնելով նաև իր յուրահատուկ և ազնվատոհմիկ մարդասիրությամբ, վեհանձնությամբ, հարգանքով դեպի մյուս ժողովուրդները: Նա երբեք իրեն չի խնայել հարևանին, ընկերոջը կամ հեռու բարեկամին և ընդհանրապես արարչաստեղծ էությանը դժվարին կացությունից դուրս բերելու գործում: Սերն ու գորովը, ըստ բանահավաքի, այն շարժիչ ուժերն են, որ հայ ժողովրդին մղում են և կմղեն առաջ՝ գոյատևման ճանապարհին: Ժողովրդի միասնության, ազգային հավաքական ուժի գիտակցումով են «բուրում» ժողովածուի նյութերը:

5 ժողովածուներում էլ Լ. Հարությունյան-բանագետի պրպտուն միտքը պեղում է մեր հինավուրց հիշատակարանները, զանազան ասացողների (վաղեմի և այսօրվա) հուշամատյանները և իր իմաստուն խոսքն ասում Արցախի հավատալիքների, կենցաղի, սովորույթների մասին: 4-րդ հատորի «Տեղանուններ» վերնագրի տակ ստուգաբանորեն բացատրվում են տեղանունները՝ յուրաքանչյուր բացատրություն կապելով այն գործոնների ազդեցության հետ, որոնցից էլ ծնվում են անունները, սովորույթը, ճակատագիրը: Ուշադրության արժանի են այն բնորոշումները, որոնք ասպացուցում են, որ հայոց աշխարհը ձևախեղվել է ոտ-

խի կողմից, բայց անկախության ոգին կենդանի է մնացել: Թեպետ այսօր չկան նշված շատ ու շատ վայրեր, սակայն ստեղծված գանձերը պատմում են տեղամասերի մասին, որոնք ավերվել են թշնամուց, բայց ոգեղեն երկիրն ու ժողովուրդը ապրում է: Ապրում է նաև ոգեղեն բանահյուսությունը:

«Տեղանունն է հողը, սարը, ձորը, բնակավայրը դարձնում հայրենիք: Տեղանունը հողին դաջված մեր հիշողությունն է: Հաճախ տեղանունը ծգում է քեզ, և դու հայտնվում ես մի դիտահարմար վայրում և ի մոտո գնում, ուսումնասիրում և մնում ապշահար: Այդքան դիպուկ միայն կարելի է կրակել» - գրում է բանահավաքը: [7]

4-րդ գրքում հետաքրքիր հյուսվածք է «Խրախճանք և խրախճանականներ» ակնարկը, ուր բացատրվում է դրանց զարգացման պրոցեսը: «Դրանք ընդգրկում և բազմաբնույթ էին և աչքի էին ընկնում խոսքարվեստային կատարելությանը, քանզի փնտրելն ու գտնելը, ստեղծագործելն ու հնարամտելը, բարձրաթիչ երևակայության մեջ թևածելը դարձել էին մարդու էության բաղադրամասը, շաղախվել արյանը, վերածվել առօրյայի, ձևավորել ճկուն մտածողություն»: Լ. Հարությունյանը համոզված է, որ «արմատական այս իրողությունն էլ դարձավ այն շողարձակ անկյունաքարը հայ ստեղծագործ ոգու համար, որ դարեր շարունակ եղել է ու է նրա առաջնիչ ուժը («հայրս՝ բանաստեղծը. հայրս՝ պար կյվողըս», «հայրս՝ նկարիչըս», «հայրս՝ ոսկերիչըս», «հայրս ամեն հինչըս»): Նա բացատրում է հանգախաղերի, գլուխկոտրուկների, խնդրախաղերի, արագ հաշվումների, ոչ մի սահման չճանաչող զվարճաբանությունների, նմանակումների, հնարամտելու, շուտասելուկների դերը:

Լ. Հարությունյանի հավաստմամբ խրախճանականները բազմաբնույթ էին, աչքի էին ընկնում խոսքարվեստային կատարելությանը: Դրանք ձևավորում էին ճկուն մտածողություն: Ցնծալից արարողությանը զվարճանքներով հալածվում էին բնության դժնի ուժերը: Միշտ էլ նորանոր հնարներ էին փնտրվում խրախճանքները միօրինակությունից զերծ պահելու համար: Խրախճանամիջոցների կողքին ավելանում են հանգախաղերը, գլուխկոտրուկները, խնդրախաղերը, արագ հաշվումները, զվարճաբանությունները, նմանակումները, հնարամտելը: Լ. Հարությունյանը համապատասխան ակնարկով խոսում է հանելուկի ու շուտասելուկի, նրանց կառուցվածքային առանձնահատկությունների, առինքնող ոճի, ռիթմի ու երաժշտականության մասին: Առանձին մեկնաբանություն է տրվում բանահյուսության հին տեսակին՝ հանելուկին, որը մտնում է ամեն ընտանիք, կատարելագործվում, զարգանում՝ դառնալով մտավոր ժամանց, իմաստաբանություն, որի վերձանման համար պահանջվում է հոգեղեն-իմացական, բնաճանաչողական ու աշխարհաճանաչողական բարձր մակարդակ: Ըստ հեղինակի՝ հանելուկի, զվարճախոսության, շուտասելուկի համար Արցախի բարբառն ունի մի ընդհանուր անուն՝ պնզըլ: Բառը բարբառում ունի որոշ առունով բացասական իմաստ՝ ոչ լուրջ բան: 4-րդ գրքում մանրամասն բացատրվում և մեջբերվում են հետաքրքիր ու համոզիչ օրինակներ:

Լ. Հարությունյանի հավաքած, գրի առած բանարվեստի նմուշները զուգակցվում են ազգագրության հետ՝ դառնալով հայ բանագիտության մեջ մեծ արժեք ունեցող հատված: Բանահավաքի շրջագայությունների, ժողովրդի մեջ հաճա-

խակի լինելու, նրան լսելու կուլտուրա ունենալու, հետաքրքրասիրության դրսևորման արդյունք են ժողովրդի կյանքի, կենցաղի, վարք ու բարքի, նիստուկացի ուսումնասիրությունը: Ժողովածուներում բացատրություններ կան բանասացների տարիքի, սոցիալ-կենցաղային միջավայրի, բանահյուսական բնատուր ընդունակությունների, արվեստի վերաբերյալ:

Դրանք հնարավորություն են տալիս ավելի լավ պատկերացնելու բանահյուսական այս կամ այն ստեղծագործության բնույթը, ժանրային առանձնահատկությունները:

Ժողովածուներում հետաքրքիր ազգագրական նյութեր կան ժողովրդական բժշկության, հարսանեկան ծեսերի, վիճակախաղերի, բուժիչ բույսերի, աղբյուրների, սուրբ ծառերի, խաչի պաշտամունքի վերաբերյալ:

«Նշխարների» հատորներում գետեղված են շուրջ 4 հազար դարձվածքներ, ավելի քան 5000 բառ-հոդված կան բացատրված, զգալի մասը՝ ստուգաբանված: Գիշտ է, կան որոշ վիճելի հարցեր ու դրույթներ, բայց կարևորն այն է, որ Լ. Չարությունյանը կարողանում է բացել պատմական անցյալում Արցախի կյանքում ճակատագրի բերումով տնտեսական, քաղաքական իրավիճակների վրա դարերի ընթացքում ծանրացած վարագույրը, հետաքրքիր հայտնագործումներով բացահայտում է հայ ժողովրդի արցախյան հատվածի հուշարձանների ներքին գաղտնիքները՝ կապված թե՛ ժամանակաշրջանի, թե՛ օտար նվաճողների տիրողական էության, թե՛ հոգևոր ու նյութական արժեքների ճանաչողական ու դաստիարակչական նշանակության հետ:

Լ. Չարությունյանի ազգագրական նյութերի արժեքը անսահման մեծ է: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ բանահյուսական ու ազգագրական նյութերում ակնհայտ է Աստծո, երկնային մոլորակների պաշտամունքը:

«Ղարաբաղցին պաշտում է Աստծուն՝ որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրինակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Չայ աշխատավորը աստծո հետ է կապում մարդկային բարօրության հույսը և պատեհ առիթով աղաչում է, որ մեղքանա և սատար լինի նրանց, ովքեր նեղ օրում են: Նա Աստծո գաղափարի մեջ է դրել նաև դեկավարի, առաջնորդի, զորավարի հանդեպ իր իդեալը: Նրա գոյության մեջ էլ նա տեսել է իր իդեալը: Նրա չգոյության մեջ էլ նա տեսել է իր դարավոր երազանքների, հավատի փլուզումը: «Աստուծ հիշքան կենթան ա ըլալ, մունք մռնեիս չընք ըլալ, էս մին ըշխարքաս սաղ-սալամաթ քնիիս ընք ըլալ էն մին աշխարքը: Մեռնելը միենգա: Մինչև մեռնելը սրտրնես ճաքումա»: [8]

Բանահյուսական մի շարք նմուշներ շեշտում են արցախցու աստվածավախությունը, աստծո հանդեպ նրա երկյուղածությունն ու հավատը («Աստծու անա մեծը էլիա Աստուծա», «Աստծու պահած կյառնը կյուլ օտել չի», «Աստուծ բիդիս, վեր կարիս Աստծու սրրտը գիդաս», «Աստուծ վեր քրզանա խռավե, հույսդ վեղեն յրա տիր», «Աստծու պարտքը վեչ մին մարթ կարել չի տա, բդի ջանաս» և այլն):

Իր ժողովածուներով Լ. Չարությունյանը նաև մայրենի բարբառի պահպանման կողմնակիցն է, ժողովրդախոսակցական գեղեցիկ նմուշների պահպանման: «Աշխատանք» թերթի «Մայրենի բարբառ» խորագիրը վարելով՝ նա ծառայել է այդ նպատակին:

«Գեղեցիկ, առնական ու խաղացկուն, հին ու հարուստ, պատկերավոր, խորապես բանաստեղծական է Ղարաբաղի բարբառը: Մեր համեստ նպատակն է գործածության մեջ պահել մոռացվող լեզվական միջոցները, կորստից փրկել մեր ոսկեղենիկ բարբառով ստեղծված բանահյուսական թանկարժեք փշուրները, մի խոսքով, օգնել սերունդներին՝ տեր կանգնելու ժողովրդական խոսվածքի բառամթերքին, լեզվամտածողությանը, արտահայտչական զարմանալի կենսունակ միջոցներին, առած-ասացվածքներին... Դրանք բանաստեղծական գոհարներ լինելուց զատ նաև մեր պատմությունն են, տարերքը, մեր մտածումների խորացված արտահայտությունները, ազգային խնդիրների նկատմամբ մեր դիրքորոշման վկայությունները, մեր ապրելակերպը, կենցաղը, հոգին ու հոգեբանությունը» [9]:

Լ. Հարությունյանը պեղեց, ուսումնասիրեց հայրենի լեռնաշխարհի բանարվեստը, մոտիկից շփվելով ժողովրդի հետ՝ ուսումնասիրեց նրա կենցաղը, միատուկացր՝ հրապարակ հանելով 5 հատորանոց աշխատություն՝ հայ ժողովրդի Արցախի հատվածի բանավոր ստեղծագործության գանձերը՝ իր արժեքավոր վաստակը ներդնելով հայ բանագիտության պատմության մեջ:

«Ի ծննդե ապրելով գյուղաշխարհում, նրա բարձր սարերում, խեղված սրբատաշ քարերի մեջ, լսելով դարերից եկած հոգեպարար մեղեդիները, իմաստուն խոսքն ու զրույցը, խորանալով հնագույն սովորություններ մեջ, ես ականայից դարձա նրանց գերին: Գրի էի առնում դեռևս այն ժամանակից, երբ նոր գրիչ բռնել էի սովորում, համոզված լինելով, որ ես իմ ժողովրդի մոռացված կենսագրությունն եմ գրում,-գրում է Լ. Հարությունյանը: [10]

Հիրավի, ապրելով ժողովրդի ճակատագրով՝ «Նշխարների» անմոռաց հեղինակը նրա վաղվա օրվա հույսով հրաժեշտ տվեց աշխարհին, սակայն նրա վաստակը վեհացրեց նրան՝ ավելի ամուր կապելով ժողովրդի բանարվեստին ու նաև ազգային ճակատագրին, քանզի՝ «Իմաստությունը խտացած կենսավորձ է, կենսավորձը՝ խտացած իմաստություն»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Լ., Գրառումներ ծոցատետրից, Եր., 2004, էջ 51:
2. Նույն տեղում, էջ 7:
3. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 2, էջ 4:
4. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, էջ 4-5:
5. Նույն տեղում, էջ 22:
6. Նույն տեղում, էջ 23:
7. Հարությունյան Լ., Գրառումներ ծոցատետրից, էջ 17:
8. Նշխարներ Արցախի բանահյուսության, Եր., 1991, էջ 10:
9. «Աշխատանք», 9 հունիսի, 1990:
10. Հարությունյան Լ., Գրառումներ ծոցատետրից, էջ 65:

РЕЗЮМЕ
Пять реликвий арцахского фольклора
Анаит Атаян

В статье "Пять реликвий арцахского фольклора" говорится о пяти сборниках знаменитого арцахского педагога, филолога, фольклориста и этнографа Левона Арутюняна, которые являются биографией арцахского народа, ее историческим воспоминанием, которые на протяжении веков разложились на мифы и легенды, традиции, сказки и другие фольклорные жанры.

Памятник, имеющий энциклопедическую ценность, является и текстологией, и теоретическим обобщением этнографического жанра и истории.

SUMMARY
Five Relics of Artsakh Folklore
Anahit Atayan

The article "Five relics of Artsakh folklore" tells about five collections by the famous Artsakhi teacher, folklorist and ethnographer Levon Haroutyunyan, which form the biography of the Artsakh people, its historical memory, which throughout many centuries served the basis for myths and legends, fairy tales and other folklore genres.

This book of five volumes has an encyclopedic value; it is both textual and theoretical generalization of the ethnography genre and history.